



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«21» 04 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 41

Ձեռնարկողը՝

<<Մաստրարա>> ԱԿ
Բ. Գորիս, Բակունցի 66

Գործունեությունը՝

Գորիսի երեխաների (Վիենի) զբոսայգու, Գորիսի երիտասարդների զբոսայգու, Գորիս (Վարարակն) գետի աջափնյա հատվածի վերակառուցում, Գորիս քաղաքի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
ՀՀ Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԶՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 41

«21» 04 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի երեխաների (Վիենի) զբոսայգու, Գորիսի երիտասարդների զբոսայգու, Գորիսի (Վարարակն) գետի աջափնյա հատվածի վերակառուցում, Գորիս քաղաքի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«Մաստարա» ԱԿ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Գ»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս քաղաք

Նախատեսվող նախնական գնահատման հայտի մշակման նպատակն է Գորիս քաղաքը դարձնել զբոսաշրջության բիզնեսի և հանգստի ամենացանկալի վայրերից մեկը ՀՀ-ում:

Գորիս քաղաքը տեղադրված է Որոտանի ձախափնյա վտակ Վարարակի (Գորիս) հովտում: Տարածքի կենտրոնով անցնում է Գորիս գետը, որը սկիզբ է առնում Իշխանասար լեռան արևելյան լանջից, քաղաքի տարածքում ունի լայն, հարթեցված ողողահուն, քաղաքից դուրս գալուց հետո հունը նեղանում է և փոխվում կիրճի: Գետի երկարությունը 30 կմ է, սնվում է աղբյուրների, ձնհալքի, անձրևաջրերով: Գորիս քաղաքի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են:

Հայտի բաղադրիչներն են՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների համալիրի ընդլայնում և բարեկարգում: պատմական թաղամասի վերակառուցում: պատմական թաղամասերի ընտրված փողոցների պահպանություն և արդիականացում:

Երեխաների (Վիենի) զբոսայգու վերականգնման և կատարելագործման նախագծի, վերջնականապատակն է քաղաքի կենտրոնական հատվածում տեղակայված զբոսայգում ունենալ բարելավված ենթակառուցվածքներ՝ ապահովելու ինչպես տեղաբնակների կարիքները հանրային տարածքների նկատմամբ, այնպես էլ այցելուների համար բարեկարգ և հարմարավետ միջավայր կազմակերպելու ժամանցը: Նախատեսում է՝

- ինժեներական ենթակառուցվածքների արդիականացում. նախատեսվում է այգու ամբողջ տարածքի արտաքին լուսավորություն տեղադրելով 219 հատ գեղարվեստական մշակված լուսամփոփներ, կազմակերպվում է 1,399հա մակերեսով կանաչապատվող գոտիների ոռոգման համակարգ, նախատեսվում է 7499,2քմ սալիկապատ ճեմուղիներից և հարթակներից մակերևույթային ջրերի ուղղորդման և հեռացման աշխատանքներ,

(Handwritten signatures and stamps)



- հիմնովին վերանորոգվում են գործող ջրահեռացման առուները, կառուցվում է 1540 քմ ընդհանուր մակերեսով բազմաֆունկցիոնալ մարզադաշտ,
- բնապահպանական խնդիրների մեղմացմանն ուղղված միջոցառումների առաջադրում;
 - հաղորդակցային կապերի խնդիրների լուծում;
 - տարածքի գեղագիտական խնդիրների դիտարկում և կատարելագործման առաջարկների առաջադրում՝ գոյություն ունեցող ջրավազանների և ծաղկանոցների փոխարինում նորերով, պահպանելով ջրային ու կանաչ տարածքների մակերեսները:
 - առանձին գործառնական գոտիների փոխադարձ գործառնական-հատակագծային փախադարձ կապերի հարմարավետ ցանցի ապահովում՝ հնարավորություն է ստեղծված առանձին գործառնական գոտիներին գործել նաև միմյանցից անկախ և առանձնացված: Այգում գործում է սրճարանային համալիր, բազմաֆունկցիոնալ մարզադաշտ, երեխաների խաղահրապարակ, հանգստի գոտիներ, որոնք կապված լինելով իրար հետ ճեմուղիներով, ունեն նաև առանձնաված տրանսպորտային մոտեցումներ դեպի ավտոճանապարհներ:
 - քաղաքային միջավայրի դիզայնի առկա տարրերի արդիականացման նախատեսում;
 - գոյություն ունեցող արահետային ցանցի վերակազմավորում, նախատեսվում է հին ծածկույթի փոխարինում բետոնյա և բազալտե սալերով 240քմ: Նոր արահետի կազմակերպում, որը քաղաքի ադմինիստրատիվ ու առևտրային շրջանները կապում է իրար հետիոտն ճանապարհով՝ բնակչության հոսքը առանձնացնելով այգու հանգստի գոտուց: Այս անցուղու երկայնքով կազմակերպվում է գրունտային ջրերի հոսքը, ստեղծելով հետաքրքիր ջրային մակերեսներ: Գլխավոր ճեմուղիների լայնությունը ընդունվել է 4-4.5մ՝ անհրաժեշտության դեպքում մասնագիտացված տրանսպորտի անարգել մուտքը /հրշեջ մեքենա, շտապ օգնություն և այլն /:

Նախատեսվում է 1,45հա մակերեսով երիտասարդների զբոսայգու վերականգնման և կատարելագործման նախագծով նպատակ է դրվել քաղաքի կենտրոնական մասում, բնակելի կառուցապատման գոտում տեղակայված զբոսայգին արդիականացնել դարձնելով հանգստի և սպորտային գոտու: Վերանորոգվում և հարդարվում են գոյություն ունեցող հետիոտն անցումները, կանոնակարգվում ու մշակվում են մանկական գործող խաղահրապարակները, առանց շինությունների կառուցման կամ տեղադրման: Նախատեսվում է այգու ռոտոգման համակարգ՝ միանալով Սյունիքի փողոցով անցնող ռոտոգման ցանցին: Ռոտոգումը կանոնավոր կազմակերպելու համար նախագծվել է նաև 22խմ ծավալով ջրի ռեզերվուար, որը թաղված է հողի տակ: Այգում նախատեսվում է հասարակական սան հանգոյց, որը նույնպես թաղվում է հողի մեջ: Տարածքը ավելի շահեկան շահագործելու նպատակով նախատեսվում են հեծանվային սպորտի, սկեթբորդի համար հարմարեցված երթուղիներ շուրջ 700մ երկարությամբ, որը ձմռան ամիսներին կօգտագործվի նաև որպես դահուկային ու սահնակային սպորտաձևերով զբաղվելու համար: Երթուղին նախատեսվում է հաշվի առնելով ռելիեֆի բնական թեքությունները և գոյություն ունեցող ծառերի դասավորությունը: Այգին ամբողջությամբ լուսավորվում է 131 լուսատուներով, հանգիստը գիշերային ժամերին ևս կազմակերպելու նպատակով: Նախագծվել են նաև արգելապատեր՝ դեկորատիվ թեթև նկարվածքով մետաղական ցանցերով:

Նախատեսվում է Գորիսի Վարարակն գետի աջափնյա հատվածի վերակառուցման նախագիծ, որի նպատակն է քաղաքի հիմնական հորինվածքային առանցքի գրավչության և հանրամատչելիության բարձրացում՝ հետիոտն և հեծանվային ենթակառուցվածքների ու ավերի միջև կապերի ամրապնդման և կատարելագործման միջոցով: Խնդրի արդիականությունն առավել ընդգծվում է տվյալ հատվածի կարևորությամբ՝ թե գետափնյա հատվածների առավել ակտիվ օգտագործման, թե այցելուների համար համայնապատկերային երթուղու ձևավորման,



ինչպես նաև հին և նոր Գորիսների սահմանային գոտու բարեկարգման կտրվածքով, և թե գետափնյա հատվածը մաքրելու և հենապատերի վերանորոգման անհրաժեշտությամբ պայմանավորված: Վերականգնվում ու կառուցվում է շուրջ 156 000 քմ մակերեսով մայթեր, հեծանվային երթուղիներ ու երթևեկելի ավտոճանապարհ: Վերանորոգվող ճանապարհի ամբողջ երկայնքով նախատեսվում է ծառայատում, կանաչ գոտիների կառուցում, տեղադրվում են փողոցային լուսավորության 69 հատ լուսատուներ:

Նախատեսվում է Գորիս քաղաքի կենտրոնական մասի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման նախագիծը, որի հիմնական նպատակն է քաղաքի պատմական միջուկի որոշակի հատվածի (Մաշտոցի և Կոմիտասի փողոցներին հարող հատվածներ) պատմական կառուցապատման վերականգնման միջոցով որոշակի հատվածում ստանալ ամբողջական պատմական միջավայր՝ քաղաքի պատմականորեն ձևավորված կառուցապատման դրվագների վերակենդանացմամբ, ինչը ևս կնպաստի ինչպես պատմական միջավայրի գրավչության բարձրացմանը, դրանով իսկ նպաստելով այցելուների հոսքի ավելացմանը, բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը՝ պայմանավորված զբոսաշրջային ոլորտում առավել լայն ընդգրկվածությամբ: Միջավայրի համալիր վերակառուցմամբ կստեղծվի նաև քաղաքային դիզայնի տարրերով հագեցած և հարմարավետ միջավայր՝ տեղաբնակների բնակությունը, աշխատանքն ու հանգիստը կազմակերպելու համար: Նշված նպատակին հասնելու համար նախատեսվում է վերանորոգել 35 բնակելի շենքերի տանիքներ շուրջ 12240 քմ ընդհանուր մակերեսով, ներկել 9350 քմ մետաղական տանիքածածկ, փոխել 522,3 քմ մակերեսով պատուհաններ, 656,2 քմ դռներ և դարպասներ, հիմնվելով արխիվային նյութերին ու պահպանված լուսանկարներին: Սահմանազատված հատվածում ամբողջությամբ փոխվում է փողոցների հարդարման նյութը՝ ասֆալտոբետոնը բազալտե և բետոնյա սալիկածածկերով/12350 քմ փողոցներ, 3937 քմ մայթ, 2764,5 հեծանվային երթուղիներ/: Վերանորոգվող մայթերի երկայնքով նախատեսվում կանաչապատում տնկելով 472 նոր ծառեր և դեկորատիվ թփեր: Արդիականացվում են ջրամատակարարման, էլ. սնուցման, կապի ցանցերը՝ բոլոր վերգետնյա կոմունիկացիաները վերատեղադրելով հողի մեջ:

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտ է արտանետվում 7 բաղադրիչ՝ 8.504 տ քանակի: Հաշվարկներով որոշված են մթնոլորտ արտանետվող հիմնական վնասակար նյութերի միջին օրական արտանետումների քանակը, որի հիման վրա կատարված է մթնոլորտի մերձգետնյա շերտում աղտոտվածության մակարդակների կանխատեսում: Հիմնական վնասակար նյութերի համար աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմաներում:

Նախատեսվող գործունեության իրականացման գործընթացում ջուրն օգտագործվում է՝

- աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքների;
- խճի փոման գործընթացում, ջրցանման;
- բետոնի խնամքի համար;
- փոշու արտանետումների նվազեցման նպատակով շինարարական հրապարակի ջրցանման գործընթացներում:

Շինարարության համար անհրաժեշտ ջուրը վերցվելու է Գորիս քաղաքի խմելու-տնտեսական ջրամատակարարման ցանցից:

Տնտեսա-կենցաղային հոսքաջրերի արտահոսքը իրականացվում է Գորիս քաղաքի տնտեսա-կենցաղային կոյուղու ցանց:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են շինարարական թափոններ: Շինարարական աշխատանքների ժամանակ հանված գրունտների ընդհանուր քանակը կազմում է 2400 տ:



Շինարարական աշխատանքների հետևանքով հավանական վնասները հետևյալն են՝

- բուսականության մասնակի ոչնչացում շինարարական գոտում, որի հետևանքով նաև տեսակային կազմի աղքատացում;
- տարածքի աղտոտում շինադրով:

Անմիջական ազդեցությունը սահմանափակվում է շինարարական գոտիով:

Շինարարության տակ հատկացված տարածքում կենդանիների բներ, միգրացիոն ճանապարհներ չեն հայտնաբերվել: Ազդեցությունը բուսական և կենդանական աշխարհի վրա կլինի նվազագույն և կկրի ժամանակավոր բնույթ:

Մթնոլորտ արտանետվող նյութերը, որոնք ազդեցություն են ունենում բուսական աշխարհի վրա համարվում են ազոտի և ծծմբի դիօքսիդները, ֆտորաջրածինը, ինչպես նաև ծծմբի, ազոտի միացությունները և ջրածնի իոնները:

Նախնական գնահատման հայտում բերված են շինարարության փուլում մթնոլորտ արտանետվող ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների քանակները: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի միջին օրական արտանետումների քանակի հիման վրա կատարված է մթնոլորտի մերձգետնյա շերտում աղտոտվածության մակարդակների կանխատեսում: Ղի աղտոտվածության չափորոշիչները նորմայից ցածր են: Տարածքում պահպանվում է նորմալ էկոլոգիական վիճակ, որևէ ազդեցություն բուսական և ջրային էկոհամակարգերի վրա մթնոլորտային արտանետումներից չի սպասվում:

Աղմուկի մակարդակը Գորիս քաղաքում շինարարական աշխատանքների ժամանակ կլինի նորմերի սահմաններում:

Մոտակա ջրային ավազանի (Վարարակն գետ) վրա ազդեցություն կարող են թողնել շինարարության ժամանակ տեղացած հոսքաջրերը:

Ջրցանման (փոշենստեցման) համար օգտագործվող ջրի ծախսերը ամբողջությամբ դասվում են անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում: Տեղումների ժամանակ առաջացած հոսքաջրերը շինարարության տարածքից հեռացվում են անձրևային կոյուղու ցանց, այնուհետև՝ Վարարակն գետ:

Լիցքերը ամբողջապես կառուցվելու են հանույթներից առաջացած գրունտերով: Գրունտերի ավելացած մասը օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար:

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄ

Այսպիսով աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, ՀՀ մշակույթի նախարարությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա



միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մաստարա>> ԱԿ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի երեխաների (Վիենի) զբոսայգու, Գորիսի երիտասարդների զբոսայգու, Գորիսի (Վարարակն) գետի աջափնյա հատվածի վերակառուցում, Գորիս քաղաքի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Ձ. Զուռնայան